

նաչում է եկեղեցու իւր ներքին շրջանում ունեցած ինքնօրինու թիւնը, ապա եկեղեցական կեանքին օրման ներք պետութեան աչքում էլ ստանում են ինքնակախ (?) օբյեկտիւ իրաւունքի նշանակութիւն, միայն թէ ոչ պետութիւնից դրուած նեղ ու խիստ մոքով, ալլ դործող պետութեան թոյլաութեամբ, հանրային շարակցութեանց մի առանձին շրջանում, որ վալելում է իւր ներքին կարգը բարեկարգելու իրաւունակութիւնը. էջ 59—60:

«Այս գերմանական օրէնքն ալլ քահանայացուներին պարտաւոր է համարում, որ նոքա պետական Համալսարաններից մէկում լսեն», էջ 69—: «Պէտք է նկատել, որ օրէնքի պահանջը իսպառ որոշման ձեւի նկատմամբ արդէն դիպչում է զգալի կերպով եկեղեցական կարգապահութեան». էջ 74:

«Այլպիսի արգելանքն (?) չեն կարող 3 ամսից անցնել», էջ 75—:

«Կառավարութիւնը պահանջում է, որ սեղանի սպասաւորները («լակէյները» ?!) աղօթեն պետութեան բարեկեցութեան և բարօրութեան համար». էջ 94:

«Որովհետեւ..., ուստի մենք ամենալուրջ կերպով առաջարկում ենք, քահանայական և կրօնի, որ առաջուալ բոլոր տարբերութիւնները և ամեն տեսակ մասնաւոր վէճերն ու թշնամութիւններն ալթմուանից ընդ միշտ վերջանան». էջ 97—:

«Պետութիւնը եկեղեցուց բաժանելու սիստեմը, իբրեւ տեղական բնաւորութեան մի երևութ, պարզ է, որ անպալման նշանակութեան շաւակնութիւն չի կարող ունենալ». էջ 101—:

Բաւական է ընթերցող, որքան օգտուեցանք այս հանրամատչելի գրքուկից:

4. Գիւղատնտեսական գրադարան № 1 ՎԱԶԻ ՄՇԱԿՈՒԹԻՒՆԸ կազմեց Դոստանդին Մելիք-Շահնազարեանց. պատկերազարդ. Տրատ.Մ. Արամեանցի, Թիֆլիս, 1902 զ. 1 ըուր:

Մեր երկիրն իւր կլիմական բնական լատիւթիւններով աշխարհիս բարեբեր մասերից մէկը լինելով, աշխատաւոր



ձեռքի վաստակը լիովին վարձատրում է, նա մանաւանդ՝ եթէ հողը մշակում է գիտակցական եղանակով և խոհեմութեամբ: Թէ Հալաստանի և թէ Կովկասի մեծ մասը մշակման ընդունակ հողերից է բաղկացած և այդ պատճառով էլ բնակիչների մեծամասնութիւնը երկրագործ է, որի մի մասը պարագում է նաև անասնաբուծութեամբ: Սակայն տարածադրաբար մինչև վերջին ժամանակներս կարևոր ուշադրութիւն չէին դարձնում՝ բարուքելու երկրի մշակման եղանակը, որ հազարաւոր տարիների ընթացքում համարեան թէ փոփոխութեան չէ ենթարկուել: Նրկրի մշակման խնդրում շօշափուում են թէ տիրող կառավարութեան, թէ կալուածատէրերի և թէ բուն երկրագործ դասակարգի շահերը. այս երեք գործօնների համեալիս և միացած աշխատութեամբ երկրի արդիւնաբերութիւնը կգարգանաւ և ժողովրդի տնտեսական դրութիւնը կը բարւոքուի: Վերջին ժամանակներս կառավարութիւնն սկսել է լուրջ ուշադրութիւն դարձնել Կովկասի գիւղատնտեսութեան վրայ՝ երկրի զանազան մասերում հիմնելով սի ո ր ձ ն ա կ ա ն դ ա շ տ ե ր յ, որտեղ մշակում են տեղական կլիմային լարմար բոյսեր և աղնուացնում՝ գիտական սկզբունքների հիման վրայ: Մեր խոշոր կալուածատէրերն էլ զգաստանալով՝ սկսել են մասնագէտ և հմուտ մարդիկ հրաւիրել՝ իրենց կալուածքը կառավարելու և արդիւնաւորելու համար: Մնում է հոգ տանել երկրագործ դասակարգի զաւակների կրթութեան վրայ, որպէս զի դոնէ նոր սերունդը տարրական կրթութիւն ստացած լինելով՝ ապագայում գիտակցօրէն վերաբերուի հողի մշակութեանը և տնտեսական աւելի լաւ պայմանների մէջ գտնուի:

Մեր երկրի արդիւնաբերութեան զարգացմանն անհրաժեշտ կերպով կնպաստէ նաև գիւղատնտեսական գիտելիքների տարածումը ժողովրդի մէջ. մեր մասնագէտ գիւղատնտեսները մինչև այժմ այդ ուղղութեամբ շատ քիչ բան են արել: Բացառութիւն է կազմում միայն լարդելի Կոստանդին Մելիք-Շահնազարեանը, որ իւր տասնևհինգամեայ դործնական գիւղատնտեսական պարապմունքի հետ զուգընթացաբար աշխատել է նաև ժողովրդի համար՝ հրատարակելով գիւղատնտեսութեան զանազան ճիւղերին վերաբերեալ գրուածքներ—ուղեցույց գործնական գինեգործութեան, ուղեցույց՝ գործնական շերամապահութեան, տարրական ալգեգործութիւն և այլն—և այժմ էլ հրապարակ է հանել սվ ա զ ի մ շ ա կ ու թ իւ ն ն սիրուն աշ-



խառութիւնը, խոստանալով մի շարք երկերի տպագրութիւնը «գ իւղատնտեսական գրադարան» ընդհանուր անուան տակ, Գովելի և նպատակարար մար ձեռնարկութիւն։

«Ա ազի մշակութիւնը» իւրաքանչիւր ալգեգործի համար անհրաժեշտ մի ձեռնարկ է՝ գեղեցիկ նկարներով ճոխացրած և պարզ ու ըմբռնելի լեզուով դրուած, Մեզանում փոքր ի շատէ մասնագիտութեան բնաւորութիւն կրող գրքերն ալնպիսի անճոռնի լեզուով են հրապարակ գալիս, որ համարեա թէ անպէտք են լինում. ոչ մասնագէտների համար. իսկ պ. Մելիք-Շահնաղարեանն ալնպիսի պարզ և զրաւիչ լեզուով է հաղորդում կարևոր գիտելիքները, որ ոչ մասնագէտ և նոյն իսկ հասարակ ընթերցողն անգամ կարող է ըմբռնել և օգտուել նրանից. որպէս զի չափազանցութիւն չհամարուի մեր ասածը, առաջ բերենք մի երկու օրինակ. «Թէև վաղի հայրենիքը, խանձարուրը Հայաստանն է և բուսաբանները ալդ պատիւը իրաւամբ տալիս են նրան, սակայն հայերը կարմրելով լեռ պիտի քաշուին ալդ պատուանդանը իրենց երկրին տալու։ Այո, խանձարուր է մնացել դեռ հինգ հազար տարիներից ինչու ևս, բայց ալդ խանձարուրի մանուկը—որթը, դեռ մանուկ է մնացել և եթէ Նոյ ալսօր մի հրաշքով գերեզմանից վեր կենար և իր սիրելի Արարատը մտնէր, դեռ շատ տեղ անխախտ կգտնէր իր հնձանները, ո՞վ գիտէ ինչքան կմխիթարուէր սրբութեամբ պահուած տեսնելով իր թողած ժառանգութիւնը, մի ժառանգութիւն՝ որ քանքարաթագոյց ծառալիի նման հալը պահել է մինչև այսօր...»։

«Ա ազի մշակութիւնը» բաղկացած է երեք մասից. ա. մասը պատմական տեսութիւն է և բացատրում է թէ որտեղ ինչպէս և երբ է սկսուել խաղողի որթի մշակութիւնը. հեղմնակը սուրբ գրքի աւանդութեան մասին խօսելով լինում է Արարատի Ակոռին կամ «Արկուռին» և ծանօթութեան մէջ բացատրում է. «Արկուռի նշանակում է վաղ ձղեց կամ տնկեց. սակայն ժամանակ է արդէն ձեռք վերցնել ալնպիսի ալա ինձինձեան—«կատու նշանակում է կալի տուն»—բացատրութիւններից և կամ թողնել առանց բացատրութեան, կամ թէ լեզուաբանական հիմունքներով ղեկավարուել։

Նրկորող մասն ամփոփում է վաղի կեանքը և զրա մասին կարևոր գիտելիքները—վաղերի բաղմացները, տաշտաթաղ ա-



ները, պատուաւորները, արդի ձգելը, վաղի խնամատարութիւնը և այլն:

Երբորդ մասում նկարագրուած են վաղի հիւանդութիւնները, պարազիտները, բնութեան հարուածները, դրանց առաջն առնելու և բժշկելու միջոցները և այլն:

Իբրև լաւելուած առաջ են բերուած Կովկասեան և արտասահմանեան խաղողների աւուներն ու տեսակները, որից երևում է, որ Եւրոպացիք ընդամենը 43 խաղողի լաւտնի տեսակներ ունին, իսկ մեզ մօտ խաղողի տեսակների թիւը հասնում է 135-ի:

Ամենայն վստահութեամբ խորհուրդ ենք տալիս ձեռք բերել այս, թէ ներքին բովանդակութեան և արտաքին հրատարակութեան կողմից, դեղկցիկ ձեռնարկը նոցա, որոնք պարսպում կամ հետաքրքրւում են արեգործութեամբ:

ԲՐԻՁ

### ՄՏԱՅՈՒԱԾ ԳՐՔԵՐ

Խրիմեան Հայրիկ. Ողբացող Խորենացին. Վաղարշապատ 1902  
Գ. Սունդուկեան. Էլի մէկ զոհ. Տփլիս 1902.

Օրացոյց ս. Փրկչեան հիւանդանոցի 1903 ամի. Կ. Պօլիս.

Բժ. Վ. Արծրունի. Մի ծխիր. Թիֆլիս. 1902.

Памяти Географа Гевонда Алишана. А. Аракелянъ.

Կարալէնիօ. Դատաստանի օրը. թարգմ. Մուշէ վարդ. (արտ. Լումալից):

Նարդոս. Տանտիրոջ աղջիկը. վիպակ. հրատ. լուս. Թիֆլիս 1902.  
Տեղեկագիր և հաշուեցոյց Թաւրիզի Հայուհեաց Բարեգ. միացեալ  
Ընկերութեան 1901—2 ամի. Թաւրիզ.

А. Дагбашьянъ. полный русско-Армянскій словарь. 2 вып. Тифлисъ 1902.

Ա. Զիլինկարեան և Տ. Ռաշմաճեան. Էլէքտրականութիւն. Ալէքսանդրապոլ 1902.

Դալուտ Տէր-Մկրտչեան. Ստեփանոս իմաստաւր. Վաղարշ. 1902

« Պետրոս Սիւնեաց եպս. Վաղարշ. } արտ.

1902.

» Գրիգոր Մանաճիհր Ռափիկ. Վաղարշ. 1902. } «Արարատ»-ից

« Ղազար Փարպեցու ձեռագրերը. Վաղարշ. 1902. }

Բժ. Ա. Բուդուշեան. Ուղեղի սիֆիլիսը. Ս. Պ. Բուրգ 1902

Բարդ. եպս. Կէորդեան. Խորենացուն Խորենացիով պէտքէ հասկանալ II հ. Թիֆլիս 1902

Արշակ Զօպանեան. Նահապետ Գուշակի դիւանը. Փարիզ 1902